

Դոց. Աշխեն Ջրբաշյանի «Հայկական ուսանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ» խորագրով դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Գիտամանկավարժական աշխատանքի արգասաբեր ճանապարհ անցած Աշխ. Ջրբաշյանն իր մարդկային բարձր նկարագրով, պատկառելի վաստակով հանրապետության մտավորականության, ուսանողության և հատկապես գրականագետներին շրջանում արժանիորեն վայելում է մեծ հեղինակություն: Վաղուց էր հասունացել նրան օրինականորեն դոկտորի գիտական աստիճան շնորհելու և պետականորեն վավերացնելու պահը:

Արխատոտելից ի վեր՝ մինչև V – VIII դարերում Հայաստանում Հունաբան դպրոց. մինչև Վերածնության, Լուսավորության ու Կլասիցիզմի դարաշրջաններ, մինչև նորագույն ժամանակների գրականության տեսաբանները պոեզիայի կառույցի ուսումնասիրությունը եղել է գրականագիտության լրջագույն նպատակադրումներից մեկը: Հայ իրականության մեջ նույնպես վաղ միջնադարից են հիմնախնդիր դարձրել ժողովրդական և գուսանական, ինչպես և հոգևոր ու աշխարհիկ պոեզիայի տաղաչափության ուսումնասիրությունը, որով և զարգացել է հայ տաղագիտությունը:

Սկսած XVIII դարից՝ հայկական կլասիցիզմի տեսաբաններն ու բանաստեղծները՝ Խաչատուր Էրզրումեցին, Ստեփանոս Ագոնցը, Էդուարդ Հյուրմյուզյանն ու Արսեն Բագրատունին, Նիկողա Բուալոյի հետևողությամբ, ուսումնասիրել և գնահատել են հին ու միջնադարյան հայ հոգևոր և աշխարհիկ տաղերգության, հայ կլասիցիստ հեղինակների բանաստեղծական արվեստը: Այնուհետև այս բնագավառում իրենց օգտակար ուսումնասիրություններն են կատարել Ավետիք Բահաթրյանը՝ «Հին հայոց տաղաչափական արվեստը» քննական տեսությունը (1891 թ. այն տպվել է Շուշիում և շուրջ մեկ դար հետո վերահրատարակվել ակադ. Էդուարդ Ջրբաշյանի ընդարձակ առաջաբանով ու խմբագրությամբ), Մանուկ Աբեղյանը՝ «Հայոց լեզվի տաղաչափություն» (1933) կոթողային աշխատությունը, նույն իյնքը՝ Էդուարդ Ջրբաշյանը, ում սաներն են ներկա գրականության տեսաբանների սերունդը՝ Հենրիկ Էդոյանը, Դավիթ Գասպարյանը, Ռաֆայել Պապայանը, Զավեն Ավետիսյանն ու

Վահան Նավասարդյանը: Այս համակարգում, ինչպես նկատվում է, գրականության պատմաբաններն ու քննադատները քանակական գերազանցություն ունեն տեսաբանների հանդեպ, մինչդեռ գրականության պատմության որևէ շրջափուլի, որևէ ուղղության կամ հոսանքի, անգամ առանձին հեղինակի վերաբերյալ մասնագիտական բնութագրություն կամ քննադատական բնույթի որևէ աշխատանք և որևէ գեղարվեստական երկի վերլուծություն համեմատական գրականագիտության չափանիշներով՝ չի կարող լիարժեք լինել առանց տեսական հիմնավորման:

Հայցելով արգո գիտական խորհրդի և ներկաների ներողամտությունը՝ պետք է խոստովանենք, որ ընդդիմախոսական սույն կարծիքում և ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի՝ քիչ առաջ հնչած կարծիքում կարող են նկատվել որոշ ձևակերպումների հնարավոր նմանություններ: Դրանք պարզապես հետևանք են ամբիոնի նիստում աստենախոսության քննարկման ժամանակ մեր ելույթի, որը, բնականաբար, չէր կարող խստորեն տարբերվել աշխատանքի մասին մեր հույժ դրական կարծիքից: Ու թեև այս ընդդիմախոսությունն էլ շարադրել ենք մյուսների կարծիքներից անկախ, միևնույն աշխատանքի մասին տարբեր մասնագետների կարծիքներում էլ անխուսափելի են հնարավոր նմանություններ կամ ընդհանրություններ:

Դոց. Աշխ. Ջրբաշյանը, տաղագիտությունն ու ստրոֆագիտությունը (հայերեն՝ տնագիտությունը) հետևողականորեն դարձնելով հատուկ ուսումնասիրության առարկա, տարիներ շարունակ գրականագիտության ներածություն, գեղագիտություն և գրականության տեսություն է դասավանդել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատում ու մագիստրատուրայում՝ հաջողությամբ զուգակցելով գիտական ու բուհական մանկավարժական գործունեությունը, հրապարակելով մի քանի տասնյակ հոդվածներ և ուսումնասիրություններ՝ նվիրված գրական ուղղություններին և հատկապես կլասիցիզմին, գրական ժանրերին ու տաղագիտությանը, որը ներառում է նաև տաղաչափությունը, հեղինակ է շուրջ մեկ տասնյակ մենագրությունների, բուհական և դպրոցական գործող դասագրքերի: Արժե հիշել, որ նա հեղինակն է «Գրականության տեսություն և գեղագիտություն» բուհական դասագրքի,

խմբագիր և համահեղինակ՝ «Գրականության տեսության արդի հիմնախնդիրներ» ուսումնական ձեռնարկի, որի մի շարք հոդվածներ և մասնավորաբար նախատուլոգիային վերաբերող ամբողջ երկրորդ մասը պատկանում է նրա գրչին:

Բանասիրության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար դոց. Աշխ. Ջրբաշյանը մեր դատին է ներկայացրել ըստ ամենայնի բովանդակալից, գիտագործնական իմաստով՝ հույժ կարևոր, բարձր արժանիքներով համակողմանիորեն հարուստ, ծանրակշիռ մի աշխատություն, որն առանց վերապահության կարելի է անվանել հայ և համաշխարհային տաղագիտության հանրագիտարան: Մակայն ընդգծենք մի էական տարբերություն. եթե հանրագիտարաններն ընդհանուր առմամբ այս կամ այն գիտակարգի, հասկացության վերաբերյալ համառոտ իմացություններ են տալիս միայն և գերազանցապես ունեն տեղեկատվական բնույթ, ապա սույն ատենախոսությունը հայկական ոտանավորի կառույցի և ստրոֆիկայի՝ տնագիտության վերաբերյալ տալիս է ամենամանրամասն ու համապարփակ գիտելիքներ. դրանց նախօրինակները դրսևորվել էին դեռևս հնադարում և համալրվել, հղկվել են գրական - գիտատեսական մտքի զարգացման ամբողջ ընթացքում:

Գնահատելի է, որ հայ տաղագիտության ուսումնասիրությունը հայցորդը կատարել է հույժ գիտական մի դասակարգումով, որում իրավացիորեն կենտրոնական դեր է հատկացված ակադ. Մանուկ Աբեղյանին: Ըստ այդմ էլ՝ հայցորդը կատարել է մինչև մեր օրերն ընդգրկող հայ պոեզիան ուսումնասիրողների ընդունելի բաժանում՝ մինչաբեղյանական և հետաբեղյանական շրջաններ: Հավելենք նաև, որ ուսումնասիրության ոլորտ են ներառվել հայ և համաշխարհային տաղագիտության գրեթե բոլոր մեծ ու փոքր ներկայացուցիչները՝ իրենց ընդունելի, մերժելի կամ քննարկելի տեսակետներով:

Նախանձելի աշխատասիրությամբ Աշխ. Ջրբաշյանը գիտական շրջանառության մեջ է դրել վիթխարի գեղարվեստական ու ու գիտատեսական նյութ գրաբարով ու միջին հայերենով, արդի գրական արևմտահայերենով ու արևելահայերենով, օգտագործել է ռուսերենով և օտար լեզուներով գրականություն և մամուլ, ընդ որում՝ շատերը հնատիպ և առաջին անգամ շրջանառող: Բնական է՝ մինչաբեղյանական շրջանը ներառում է նաև միջնադարից հետո հայկական կլասիցիզմի առաջին տեսաբաններին՝ Խաչատուր Էրզրումեցուն, Ստեփանոս Ագոնցին, Արսեն Բագրատունուն ու Էդուարդ Հյուրմյուզյանին: Առանձնակի ուշադրության են

արժանացել XVIII - XX դդ., մասնավորապես Մխիթարյանների տաղագիտական աշխատությունները (մենագրություններ, հոդվածներ, թարգմանությունների առաջաբաններ, գրախոսականներ և այլն), որտեղ առաջ են քաշվել հայկական ոտանավորի բնույթի հետ կապված տարաբնույթ հարցադրումներ:

Կանոնակարգային պահանջ է, որ դոկտորի գիտական աստիճան հայցողն իր ատենախոսությամբ պետք է նոր խոսք ասի, որով ստեղծի գիտության տվյալ բնագավառի ուսումնասիրման նոր սկզբունքներ, կիրառի մեթոդական նոր մոտեցումների համակարգ ու կատարի նոր բացահայտումներ՝ ինչը սովորաբար անվանում են գիտական նորույթ, և այդ խոսքը պետք է լինի ընդհանրացնող՝ հենված գիտության արդի նվաճումների վրա: Իր էությամբ հենց այդպիսին է հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը՝ օժտված գիտական գնահատելի բարձր արժանիքներով՝ քննարկվող ծավալուն նյութի ուսումնասիրությունը՝ նոր մոտեցմամբ ու լայն ընդգրկումով, գիտական իրապես բարդ խնդիրների մասին փաստառատ շարադրանքը՝ մատչելի լեզվով ու ոճով և գիտական համոզությամբ: Աշխատանքի բովանդակությունը հարուստ է, կառուցվածքը՝ կուռ, հարցադրումներն ու դրանց լուծումները՝ խորապես գիտական ու արդիական:

Գործող կանոնակարգի թելադրանքով՝ ատենախոսը ներածական մասում հստակորեն ներկայացրել է հարցի պատմությունն ու նրա մշակվածության աստիճանը, թեմայի արդիականությունը, ատենախոսության գիտական նորույթը՝ հստակորեն առաջադրելով իր հետազոտության նպատակներն ու խնդիրները: Այնուհետև՝ բուն շարադրանքում՝ ատենախոսության երեք ընդարձակ գլուխները կազմող ենթագլուխներում, արդի գրականագիտության նվաճումների տեսանկյունից, պատշաճ մակարդակով հանգամանորեն ներկայացվում են առաջադրություններն ու դրանց գիտական լուծումները: Այդ երեք գլուխներից յուրաքանչյուրը իր ենթաբաժիններով մյուսներին սերտորեն շաղկապված, տաղագիտության մի կարևոր խնդրի նորովի մեկնություն է, և բոլորը միասին են կազմում մի գիտական հոյակապ ամբողջություն: Ցավոք, ժամանակի սղության պատճառով չենք կարող խորանալ բոլոր մանրամասների մեջ: Դրանց մեկ առ մեկ և հանգամանալից քննությունը, թեև անհրաժեշտորեն ցանկալի, սակայն այս պահին անկարելի է պարզապես: Բավարարվենք նրանով, որ քիչ առաջ

հայցորդի խոսքում, առաջատար կազմակերպության՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կարծիքում, մեծարգո պաշտոնական ընդդիմախոսների ելույթներում, որոնք այս բնագավառում իրոք ունեն անուրանալի մեծ վաստակ ու ներդրում, արդեն մասնագիտորեն գնահատեցին աշխատանքի կառուցվածքը և իրենց բնութագրումներով ստեղծեցին գիտական այս կարևոր աշխատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում: Խուսափելով արգո նախորդներին կրկնելուց՝ մենք կդիտարկենք ատենախոսության երեք գլուխներում արծարծված այն հիմնախնդիրները, որոնք, մեր կարծիքով, հայցորդը կա՛մ արծարծում է առաջին անգամ, կա՛մ էլ շատերին տալիս է սպառիչ պատասխան: Սրանով, իհարկե, չենք ուզում ասել, թե ատենախոսությունը դիտարկում է հույժ կարևոր և պակաս կարևորություն ունեցող հարցեր ու խնդիրներ. պարզապես հնարավոր չէ անդրադառնալ բոլոր հարցերին, որոնք ատենախոսը քննել է գիտական արտակարգ բարեխղճությամբ:

Այսպես, առաջին՝ «Հայ տաղագիտության պատմության փուլերը» գլխում հեղինակը հանգամանորեն քննել է հայկական ոտանավորի բնույթի հարցերը մինչաբեղյանական շրջանի հայ տաղագիտության մեջ, արծարծել հայ հին բանաստեղծության տաղաչափական արվեստի բնորոշումները, նորովի մեկնաբանել Արսեն Բագրատունու «հայկական չափը», որով հայկական տաղաչափության հնագույն ձևերից մեկը նա փորձում էր նորոգել՝ համապատասխանեցնելով եվրոպական դյուցազներգությունների կամ հերոսապոեմների հնչողությանը՝ կարճ ու երկար ձայնավորների կամ վանկերի խնդիրը լուծելով արտասանական տևողությամբ: Այս կապակցությամբ էլ նա անդրադարձել է նույն Բագրատունու թե՛ այդ չափով գրված «Հայկ դյուցազն» հերոսապոեմին, թե՛ Հովերոսի, Վերգիլիոսի պոեմների և թե՛ Տորկվատո Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի՝ Արսեն Ղազիկյանի և Աթանաս Տիրոյանի թարգմանությունների շուրջ ծագած բանավեճերի մանրամասներին:

Կարևոր ենք համարում նաև Մ. Պեշիկթաշլյանի առաջին շրջանի հայկական չափով գրված գրաբար բանաստեղծություններին անդրադարձը («Զբոսանք Արտաշեսի Առաջնոյ» և այլն), ինչպես նաև ավելի ուշ՝ մինչև XX դարի առաջին տասնամյակները՝ Վարուժանի, Զարենցի ստեղծագործություններում նրա դրսևորումներին:

Ասվածից հստակ երևում է ատենախոսության հեղինակի հայացքի լայն ընդգրկունությունը, մանավանդ որ նա քննարկում է տաղագիտության՝ չափածո գեղարվեստական

խոսքի ռիթմիկ բնույթի, ռիթմի հիմնական միավոր բանաստեղծական տողի, տող կազմող շեշտված և անշեշտ վանկերով պարզ ու բարդ ոտքերի, կշռույթի, հատածի, արական և իգական հանգերի և առհասարակ խոսքի երաժշտականությունը բուն երաժշտական հասկացությունների զուգադրությամբ: Վերարծարծվում է բանաստեղծական և երաժշտական ռիթմերի ծագումնաբանական ընդհանրությունը:

Այս գլխի վերջին ենթաբաժիններում էլ հայցորդն անդրադարձել է հայ տաղագիտության մեջ Մանուկ Աբեղյանի կատարած վիթխարի դերին, նրա տեսության առանձնահատկություններին և արտահայտել իր նկատառումները մեծանուն հայագետի տեսակետների նկատմամբ՝ քննության առնելով նրա «Հայոց լեզվի տաղաչափություն» հիմնարար աշխատությունը և արժևորելով նրա ուժեղ կողմերը և անհամաձայնություն հայտնել որոշ թուլությունների հանդեպ:

Դոց. Աշխ. Ջրբաշյանը, սակայն, ատենախոսության բոլոր էջերում հետամուտ է գիտական ճշմարտության բացահայտմանը և հարկ եղած դեպքում արդարացի ու բարեկիրթ բանավեճ է վարում հեղինակությունների հետ՝ վստահ հայտնելով իր առարկությունը նրանց անընդունելի կամ հնացած տեսակետներին: Դա պարզորոշ երևում է Արսեն Բազրատունու, Ավետիք Բահաթրյանի և մանավանդ Մանուկ Աբեղյանի հետ տաղագիտության սկզբունքային հիմնախնդիրների շուրջ բանավիճելիս: Առաջին գլխի վերջին ենթաբաժինն այդպես էլ վերնագրված է՝ «Մանուկ Աբեղյանի տեսության քննադատությունը»:

Բայց ովքե՞ր էին քննադատները, Աբեղյանի ի՞նչն էին քննադատում նրա ողջության օրոք և ինչպե՞ս: Այս հարցին հայցորդը, հենվելով Էդ. Ջրբաշյանի, Ռաֆայել Պապայանի, Հենրիկ Էդոյանի և Դավիթ Գասպարյանի աշխատությունների վրա, տալիս է մասնագիտական հստակ ու համոզիչ պարզաբանումներ՝ մատնանշելով հայկական ոտանավորը գուտ շեշտական համարելու սխալը և նրա վանկական լինելու իրողությունը՝ չանտեսելով համաշեշտ ոտանավորի հետ առնչությունները:

Հայկական ոտանավորի սկզբունքային հարցերը հայցորդը քննարկում է ահռելի նյութի ուսումնասիրությամբ, շարականների և մյուս հոգևոր երգերի, աշխարհիկ տաղերգության, կլասիցիստական քնարերգության հետ միասին դիտարկում նաև գուսանական աշուղական

բանաստեղծության տարատեսակները՝ մատնանշելով նաև մեղեդիով երգվող բանաստեղծական չափերի և գուտ ընթերցանության համար գրված չափածոյի տարբերությունները: Նրա այս մեկնությունները ավելի են մոտեցնում տեղաբնիկ հնագույն գուսանականի և XVI դարից հայ իրականություն մուտք գործած աշուղականի տարբերությունը:

Ատենախոսության կառուցվածքն այնքան է կոտ ու միաձույլ, որ երեք գլուխները միմյանց օրգանական ու տրամաբանական շարունակությունն են թվում, և տպավորություն է ստեղծվում, թե առաջին գլուխը հաջորդների տեսական հիմքն է, ու նրանք ունեն տեսականի և գործնականի հարաբերակցություն. առանց առաջին գլխում դիտարկված հարցադրումների գիտական հիմնավոր քննության ու պարզաբանումների ահնար պիտի լիներ երկրորդ և երրորդ գլուխների շարադրումը: Երբ հայտնի է հայկական ոտանավորի բնույթի, նրա վերաբերյալ տարակարծությունների ու բանավեճերի, բախվող տեսակետների գիտական արժևորումը, արդեն դյուրանում է տաղագիտության ընդունելի սկզբունքներով XIX – XXI դդ. հայ բանաստեղծների տաղաչափական արվեստի քննությունը:

«Հայ պոեզիան տաղաչափական քննության լույսի ներքո» խորագրով երկրորդ գլուխն ունի ուր ընթափառվում, որոնցում արդեն հայտնի տեսական գիտելիքների համակարգով քննվում են հայ հին և միջնադարյան պոեզիայի տաղաչափական առանձնահատկությունները, հայ կլասիցիստական քնարերգության տաղաչափությունը, արևմտահայ և արևելահայ գրական լեզուների տաղաչափական յուրահատկություններն ու սկզբունքային տարբերությունները, կատարվում է արևմտահայ և արևելահայ բանաստեղծության համեմատական քննություն՝ Դանիել Վարուժանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի ստեղծագործությունների տաղաչափության ուսումնասիրության օրինակով: Բնական է, որ այս ամենի համար անհրաժեշտ էր և տաղաչափական համակարգերի ու նրանց փոխանցումների դիտարկում՝ առանց որի անհնար պիտի լիներ արժևորել, ասենք, Վարուժանի տարբեր ժողովածուներում կամ Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուում տաղաչափական բազմազան ձևերի, այդ թվում և հեկզամետրի ու հին հայկական պոեզիայի ձևերի դրսևորումները:

Այսօր գործածվող համընդհանուր գրականագիտական եզրաբառ-տերմիններից շատերն ստեղծվել են օտար միջավայրում՝ Արևելքում կամ Արևմուտքում: Դրանք թեև հայրե-

նի ծնունդներ չեն, բայց գործածում ենք հայացրած՝ համարելով մերը: Խորթություն չզգալով՝ երբեմն զուգահեռաբար գործածում ենք թե՛ մեկը, թե՛ մյուսը: Պատահել է, որ գերապատվություն ենք տրվել օտար տերմին - եզրաքառերին այն դեպքում, երբ առակա են դրանց հայկական համարժեքները: Սակայն որոշ դեպքերում, ականջին անսովոր լինելու պատճառով դրանք ստորադասվում են օտար տերմիններին, քանի որ նաև չեն արտահայտում գրական երևույթի էությունը կամ արտասանական նմանությամբ առաջ են բերում շփոթություններ:

Բանաստեղծական տունը առհասարակ չափածոյի կարևոր բաղադրիչներից է, տաղադիտության ուսումնասիրության առարկա: Բայց ինչպե՞ս անվանել գրականագիտության այդ բաժինը հայերենով: Փորձել են կոչել տնագիտություն, որը, սակայն, ունի որոշ անհարմարություններ. անսովոր է և անմիջականորեն առնչվում է ոչ թե գրականությանը, այլ կենցաղային երևույթներին՝ բնակարանին և առնչակից այլ խնդիրների: Ահա ինչու է ուսումնասիրողն այս դեպքում տան փոխարեն գերադասել ստրոֆ օտար եզրաքառը և ատենախոսության երրորդ գլուխը, որտեղ հանգամանորեն ուսումնասիրված է հայկական ոտանավորի կառույցի այդ կարևոր բաղադրիչը, վերնագրել «Հայ պոեզիայի ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ»:

Այստեղ էլ հայցորդը նույն բժախնդրությամբ, խնդիրը թե՛ տեսական, թե՛ գործնական մակադակներում լիարժեք ներկայացնելու նպատակադրմամբ, հայ դասական ու ժամանակակից բանաստեղծությունից առնված դիպուկ օրինակների քննությամբ արժևորել է հայ տաղադիտության մեջ միմյանց հետ ձևախմբատային ընդհանուր հատկանիշներով շաղկապված տողախմբերի, այսինքն՝ բանաստեղծական տան տարատեսակների՝ դիստիխ, տերցին կատրեն, կվինտա, սեքստետ, օկտավ և այլն, ինչպես նաև քնարերգության կայուն ձևերի՝ բանաստեղծական ազգային և փոխառյալ տեսակների՝ հայրեն, խաղիկ, տրիոլետ, սոնետ, կանցոն, ռոնդո, դազալի, դուբեյթ, սեմայի, մուխամմազ, դոշմա, բայաթի, Բալլադ և այլն, հանգի և հանգավորման տարատեսակների հանգամանակից քննություն: Մրանց տաղաչափական հատկանիշների ու ժանրային յուրահատկությունների բնութագրությունը նույնպես կատարված է Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Հ. Սահյանի և ժամանակակից տարբեր հեղինակների ստեղծագործությունների՝ այս տեսանկյունով քննությամբ:

Կանոնակարգով պահանջվում է նաև աշխատանքի կապակցությամբ հայցորդին անել դիտողություններ, մատնանշել նկատված թերացումներ, հայտնել ցանկություններ: Բարեբախտաբար այդպիսիք չկան, կան միայն ցանկություններ և առաջարկություններ, որոնք պահանջ էլ չեն: Ի՞նչ պահանջել մի ատենախոսությունից, որն այս տեսքով էլ լիովի բավարարում է դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջները: Գուցե հեղինակն իր աշխատանքը նախատեսել էր հենց այս չափով ու ծավալով, իսկ մեր պահանջը կատարելու դեպքում կառաջանային որոշ անհամամասնություններ:

Այնուամենայնիվ, մի երկու խնդրի վրա կուզենայինք հրավիրել հայցորդի ուշադրությունը: Ի՞նչ խոսք, ստրոֆիկայի տեսանկյունով արժեր քննել Համո Սահյանի քնարերգությունը: Նախասիրության հարց է, իհարկե, բայց այս դեպքում այն դառնում է մասնագետի կողմնորոշիչ կարծիք, որից դուրս են մնում Հովի. Շիրազը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Լյուդվիգ Դուրյանը, Մկրտիչ Սարգսյանը և մյուս բանաստեղծները: Մեզ թվում է՝ հայցորդը ոչ թե պետք է առանձնացներ այս կամ այն բանաստեղծին, այլ հայ քնարերգության մեջ տաղագիտական երևույթները վերհաներ ու մեկնաբաներ: Պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար, կարծում ենք, այս բաժինը կարելի էր շարադրել հիշյալ բանաստեղծների այն երկերի քննությամբ, որոնք համապատասխանում են ատենախոսության առաջադիր նպատակին:

Սրան առնչակից մի այլ խնդիր ևս: Անշուշտ գնահատելի է Վերածննդի դարաշրջանից՝ XIV դարից պետրարկյան և XVI դարից շեքսպիրյան սոնետի՝ որպես բանաստեղծական ժանրատեսակի, հայ գրականություն ներմուծումը XIX դարում, XX դարում մեծաբեկեցյան «ձայնյակի» ու թեքեյանական «հնչյակի», արևելահայ իրականության մեջ բանաստեղծական այդ տեսակի տերյանական ու չարեկեցյան կատարյալ նմուշները մատնանշելը, Հակոբ Հակոբյանի 8 տողանի սոնետը «մոռանալն» ու Հենրիկ Էդոյանի սոնետների պսակն արժանապես գնահատելը:

Սակայն չպետք է մոռանանք, որ իրենց կառույցով, բովանդակությամբ ու գեղագիտական նպատակադրումներով տարբեր էին պետրարկյան և շեքսպիրյան սոնետները. Լաուրայի մահից առաջ և հետո գրված պետրարկյան սոնետները, որ բովանդակությամբ գերազանցապես սիրային են, ունեն երկու քառատող և երկու եռատող տուն (4 + 4 + 3 + 3), իսկ


շեքսպիրյանը՝ երեք քառատող և մեկ երկտող տուն (4+4+4+2) կառույցը՝ թեմատիկ-բովանդակային ավելի լայն ընդգրկումով: Ցանկալի կլիներ՝ ցույց տրվեր նաև, թե սոնետի ո՛ր տեսակը կամ ո՛ր կառույցն են նախընտրել հայ հեղինակներն ըստ իրենց նախասիրությունների:

Մի նկատառում նա: Որքանո՞վ է արդարացի Հովհ. Շիրազին առհասարակ անտեսելը կամ շրջանցելը այն պարագայում, երբ նա ոչ միայն սոնետի խոշորագույն վարպետներից է հայ իրականության մեջ՝ հեղինակելով բազմաթիվ ու բազմաթեմա սոնետներ, այլև իր գլխավոր գործի՝ «Հայոց դանթեականը» դատաստանամատյան-պոեմի առաջին տարբերակները 1942 թվից գրել է հենց սոնետներով: Չարենցը «Դանթեական առասպել» պոեմը գրել էր Դանթեի «Դժոխքի» երկու տեքստ տներ միավորելով մեկ վեցատող տան մեջ, Շիրազն իր պոեմը շարադրել էր մի քանի հարյուր սոնետներով՝ ակնկալելով, որ բանաստեղծության այդ տեսակն առավել կմոտեցնի «Աստվածային կատակերգության» հեղինակին ու իր արտահայտչական հնարավորություններով կտա հայոց անպարագրելի ողբերգությունը պատկերելու և համաշխարհայնացնելու ավելի լայն հնարավորություններ: Նույնիսկ պոեմի առաջին գլուխներից մեկի արձակ առաջաբանում գրել է. «Իմ այս բազմահավիտենահառաչ ամեն սոնետի ամեն տողի տակ թաքնված՝ ես պիտի լսեմ, սակայն, հառաչանքն անգամ աչքերի, որոնք մոնչում են իրենց արցունքոտ լռությամբ»: Հետագայում՝ 1960-ականներին, պոեմը լրամշակելիս հեղինակը խախտել է սոնետի կառույցը՝ հայոց մեծ ողբերգությունը 14 տողի շրջանակում չկաղապարվելու պատճառով: Այդ պոեմի 1989 թ. խորհրդային հրատարակության և 2021 թ. մեր հրատարակած տարբերակում դժվար չէ նկատել անխաթար պահպանված հարյուրավոր սոնետներ՝ ընդ որում շեքսպիրյան տարբերակով:

Մեր այս նկատառումներն ընդամենը առաջարկություն են՝ աշխատանքը տպագրելիս այն ավելի կատարյալ տեսնելու մեր ցանկությունից բխող:

Ամփոփենք: Դոց. Աշխեն Ջրբաշյանի «Հայկական ոտանավորի տաղաչափական և ստրոֆիկական կառուցվածքի հիմնախնդիրներ» խորագրով դոկտորական ատենախոսությունը գիտական բարձրորակ աշխատություն է, որն ընդլայնում է պատկերացումները հայ տաղագիտության մասին և բացում է այդ գիտաճյուղն ուսումնասիրելու նորանոր ուղիներ ու հնարավորություններ:

Աշխատանքը լիովին համապատասխանում է սահմանված պահանջներին ու չափանիշներին, իսկ նրա հեղինակը՝ իր հայցած գիտական ասիճանին: Ուստի լիասիրտ միջնորդում ենք ԵՊՀ -ում գործող 012 մասնագիտական խորհրդին՝ դոցենտ Աշխեն Էդուարդի Զրբաշյանին շնորհելու իր հայցած՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը Ժ 01. 04 «Գրականության տեսություն» մասնագիտությամբ, որին նա արժանի է անվերապահ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝  ՍԱՄՎԵԼ ՍՈՒԴԱՐՅԱՆ
բ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Վ. Գյոթեի
մեդալակիր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության
պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ

Պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Ս. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ գիտքարտուղար, բ.գ.թ., դոցենտ

17 հունիսի, 2026 թ.

